



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թի 659
Դեկտեմբեր 4, 1991

Մեծայարգ
Տոբթ. եւ Տիկին Րաֆֆի եւ Ծղակ Յովհաննէսեան
Ինտիանա.

Սիրելի Տոբթ. եւ Տիկին Յովհաննէսեան,

Այս գրութեամբ կը փափաքինք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել ձեզի՝ Ծիգակո մեր այցելութեան օրերուն մեզի հանդէպ ձեր ցոյց տուած ազնիւ ընդունելութեան եւ ձեր կազմակերպած հիւրասիրութեան համար:

Գնահատելի ու քաջալերական երեւոյթ մըն է տեսնել ամոլ մը՝ որ համախորհուրդ կերպով նուիրուած ըլլայ եկեղեցանուէր ու ազգանուէր նուիրական գործունէութեան: Դուք ձեր սուղ ժամանակը եւ բարոյական ու նիւթական օժանդակութիւնը տրամադրած էք ձեր համայնքին ու Առաջնորդարանիս բարօրութեան: Հոգեկան ուրախութիւն էր ներկայ գտնուիլ Հայ Եկեղեցոյ մը պարտամորհակի ամբողջական վճարման արարողութեան: Հոս եւս դուք, որպէս նուիրահաւաքման պատասխանատուները, ձեր կարելին ըրիք որպէս զի Հայ Եկեղեցին զերծ կացուցուի իր պարտքերէն եւ այսուհետեւ իր աստուածահաճոյ գործը շարունակէ անկաշկանդ կերպով: Աստուած վարձահատոյց պիտի ըլլայ ձեզի:

Մեր երախտագիտութիւնը կը յայտնենք նաեւ ձեր հայաշունչ ընտանեկան յարկին ներքեւ ի պատիւ մեզի կազմակերպուած հիւրասիրութեան համար: Այդ առթիւ պատենութիւնը ունեցանք մօտէն ծանօթանալու շրջանի ծանօթ անձնատրութիւններուն հետ եւ ջերմ մթնոլորտի մը մէջ ազգային հարցերու մասին գաղափարի փոխանակութիւններ ունենալու:

Կ'աղօթենք որ Տէրը Իր մշտական հովանիին ներքեւ պահէ ձեզ ու ձեր հարազատները եւ Իր շնորհները առատացնէ ձեր բոլորին վրայ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ